

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փոքր

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՐ. ողջ.

Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ

Տարեկան ՂՐ. 400

Վեցամսեայ » 33

Եռամսեայ » 30

ՏԱՐԵԿԱՆ


Տարեկան ՔՐ. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՇՈՒՄ

ՈՒՆԷ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՏՐԵՐԸ

Տնօրէն—Խմբագիր Յ. ԱՂԻՍԵՐ

ԿՍՐԵՈՐ ԱԶԳ

Թերթիս տնօրէնութիւնը որոշած է «Փարոս»ի 12րդ. թիւէն աւելին այլ ևս թերթ չի վրկել իր Եգիպտական բաժանորդներէն ամեն աւելին որ մինչև այդ թուականը գտնէ եռամսեայ բաժանորդագրութեան մը փոխարէքը չեն վճարած տնօրէնութեան:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՂԵՔՍ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ

(Շար. 8րդ. թիւէն և վերջ),

Այսպէս ըլլալով մեր հարցումներուն շարքը ու անոնց պատասխանները, մեզ կը փայ մատնանիլ ընել վէճի առարկայ եղող խնդիրները մեր համալսման համաձայն լաւագոյն կերպով լուծելու ճամբան, ինչպէս խոստացած էինք մեր յօդուածին բաւելիքը, որու շարունակութեան մէջ հաստատեցինք թէ Աղեքսանդրիոյ ազգային վիճակն շատ հեռի է Սահմանադրական ըլլալէ:

Ազգ. Սահմանադրութիւնը թէ 38 տարիներէ ի վեր հաստատուած է, բայց ինչ ինչ պատճառներով ուրիշ գաւառաց և նոյն իսկ կեդրոնին մէջ կէտ առ կէտ գործադրուած չէ թէ՛ ըստ տառին, թէ՛ ըստ ոգւոյն: Աղեքսանդրիոյ հիմնական վիճակին պատճառը, ինք՝ արդի Թաղական խորհուրդը չէ. Սահմանադրութեան հրատարակութեան թուականէն ի վեր, երբեք եղած չէ որ Աղեքսանդրիոյ ազգային վիճակը ըստ ամենայնի, մինչև իսկ միւս գաւառներու չափով, Սահմանադրութեան համաձայն վիճակ մը ստացած ըլլայ՝ իր պաշտօնական մարմիններու կազմակերպութեան տեսակէտով գէթ: Եւ այս բանին համար եթէ պատասխանատուութիւն կայ, այդ պատասխանատուութիւնը կը ծանրանայ ժողովրդին վրայ, եկող գացող Առաջնորդներուն վրայ, Պոլսոյ Ազգ. Պատ. Բիւրոյն վրայ և Աղեքսանդրիոյ ազգային շրջերէն ոմանց վրայ:

Ժողովուրդին վրայ՝ որ լինի անտարբերութեամբ զետեղի գերը ըս-

տանձնած է աւելի, և որքան որ գիտենք, ցարդ լուրջ ձեռնարկ մը ըրած չէ Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութիւնը պահանջող. ի բաց առեալ 1888ի տկար շարժումը և այս տարուան 17/30 մայիսի հանրադրութիւնը, որը սակայն պէտք եղած պայծառութեամբ չի ցոյցաներ իր մէջ ստորագրողներու կամքը:

Եկող գացող Առաջնորդներուն վրայ, իզմիրլեան Սրբազանն ալ մէջ առնելով, որ Սահմանադրութեան տեղական պահանջումներուն համաձայն գործադրելու գաղափարին կուտակից էր, և այսպէս վարուեցաւ 1888ին Թաղար փաշայի մահէն վերջը, որ կամ բոլորովին ինքնազուլ և կամ միայն իր կողմէ կազմուած Թաղական խորհուրդի մը աշակցութեամբ կը վարէր Աղեքսանդրիոյ ազգային գործերը:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի, այսինքն Սահմանադրութեան տառին և ոգիին գործադրութեան գերագոյն հսկողին վրայ, որ ի մէջ այլոց, հաւանակ Սահմանադրութեան, Աղեքսանդրիոյ Թաղական խորհուրդներու հետ ուղղակի յարաբերութեան մտած և անոնց գաւառի կեդրոնական վարչութիւնէն անկախ ըլլալու ձգտումները քաջալերած է ի վաղուց անտի: Աղեքսանդրիոյ ազգային շրջերէն ոմանց վրայ, որ պատկուծութիւն համարած են իրենց, համարաւոր ըլլալ Գաւառական կեդրոնական վարչութեան, նկատելով թերեւ որ անոր անդամները իրենցմէ աւելի խոնարհ զիրքի կը պատկանէին ընկերական տեսակէտով:

Երբ 38 տարուան այսպիսի անցեալ մը գոյութիւն ունեցած է, երբ ի Պոլիս, Ժամանակէ մ'ի վեր պետական ու ազգային շրջանակներուն մէջ հաշտ աչօք չնայուիր Սահմանադրութեան վրայ, երբ կան դեռ ուրիշ կարգ մը ո'չ նուազ կարևոր նկատումներ, որոնց վրայ ծանրանալը օգտակար չենք համարիր, չենք կարծեր ընաւ որ Սահմանադրութիւնը՝ Աղեքսանդրիոյ մէջ կէտ առ կէտ և անմիջական կերպով գործադրելու գաղափարն զօրաւոր ընդգրկումութեանց և մինչև իսկ անկարելիութեանց չի բաղնի:

Մնաց որ նկատելու արժանի յոյժ կարևոր կէտ մ'է թէ այդ գաղափարի գործադրութիւնը օգտակար է թէ ոչ:

Մենք այս մասին կատարելապէս համամիտ իզմիրլեան Սրբազանի, մեր համալսման է թէ Սահմանադրութեան առական գործադրութեան մասին, առանց խոստապահանջ ըլլալու Եգիպտոսի մէջ, փոյթ տալու է անոր ոգիին գործադրութեան, հոգ չէ թէ այս կերպով Սահմանադրական ինչ ինչ երկրորդական սկզբունքներ անգործադրելի մնան, ընդհակառակը Սահմանադրութեան մէջ չընդունուած այլ սակայն տեղական պայմաններու տեսակէտով օգտակար սկզբունքներ ընդունուին և գործադրուին:

Զոր օրինակ Սահմանադրութիւնը կը արամազրէ որ ազգային տուրք չառուղները ազգային գործոց չի մասնակցին, ինչպէս և օտարահայտակ չայնին: Ըստ մեզ Եգիպտոսի համար ներքին պէտք է ըլլայ որ ալգային տուրք չվճարողներն ալ, ինչպէս և օսմանեան հպատակ չեղող չայնին ալ պաշտօնական մարմիններու ընտրութեանց ասանք քուէ տան և առնեն:

Այս տողերէն ինքնին կը հետեի թէ մենք կը պատկանինք անոնց գաւառակարգին, որոնք նկատելով Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութեան անկարելիութիւններն կամ անպատեհութիւններն, փափաքող են որ Եգիպտոսի համար յատուկ Սահմանադրութեան հրահանգ մը պատրաստուի ու գործադրուի, Աղեքսանդրիոյ համար սա հետեւալ սկզբունքներու վրայ յիմար:

1. Ժողովրդային գաղափարի քուէով ընտրութիւն:

2. Համարատուութիւն և համառութիւն և հետեւաբար իրարմէ բարձր պաշտօնական մարմիններուն կազմութիւն:

Անշուշտ Սահմանադրական սկզբունքներուն համաձայն չէ որ Աղեքսանդրիան Թաղական խորհուրդէն, վարժարանի Հոգաբարձութիւնէն և Աղքատաց խնամակալութիւնէն զատ ուրիշ պաշտօնական մարմին չունենայ իր ծոցին մէջ, բայց ներկայ պարագային մէջ օգտակարին չափ

և ասկէ աւելին ի նկատի ունինք և կարելին: Թերեւս օր մը երբ արդի պայմաններն և պարագաներն հիմնովին փոխուին, հարաւոր ըլլայ Սահմանադրութեան աւելի համաձայն ուղղութիւն մը տալ Աղեքսանդրիոյ Ազգ. պաշտօնական մարմիններու կազմակերպութեան գործին:

Եւ արդէն քիչ մը առաջ համառօտիւ գծուած ուրուագծին համաձայն պատրաստուած է, եթէ չենք սխալիր, իզմիրլեան Սրբազանի ձեռքով յատկապէս Եգիպտոսի թեմին համար պատրաստուած և ասկէ առաջ լրագրական յօդուածներու նիւթ եղած Սահմանադրական հրահանգն որը սկզբունքով ընդունուած է կեդրոնական վարչութիւնէն, խորէն Պատրիարքի օրով:

Հրապարակային վիճարանութեան առարկայ արդի խնդիրներն կարգադրելու և լուծելու համար՝ մեր մատնանիլ ընելիք ճամբան է հետեւաբար, խնդրել վիճակիս Ս. Առաջնորդէն, որ անյապաղ վարժանի տնօրինել բարեհաճի որ յիշեալ Սահմանադրական հրահանգը քննուի, եթէ տեղի կայ բարեփոխուի, վերջապէս ընդունուի և գործադրութեան գրուի, Եգիպտոսի ուրիշ մասերուն նոյնպէս և Աղեքսանդրիոյ համար: Յիշեալաբար այդ հրահանգի համաձայն կ'ընտրուին պաշտօնական մարմինները և եթէ դարձեալ որեւէ Ժամանակ վէճ ծագի, Ժողովուրդ, Ժողով, Առաջնորդ իրենց առջև որոշապէս գծուած օրէնք մը ունենալով, ըստ այնմ պէտք եղածը կը տնօրինեն փութով:

Բայց զիտենք թէ այդ հրահանգը գործադրելի վիճակի մէջ դնելու համար՝ մէկ երկու ամսուան Ժամանակը բաւական չէ և այս պարագան անհամաձայն է փափաքին անոնց, որոնք կարելի եղածին չափ շուտ տեսնել կուզեն հիմնական թաղ. խորհուրդին պաշտօնավարութեան վախճանը:

Հոս փակագիծ մը կը բանալ, ըսելու համար թէ մենք սկզբունքով համամիտ չենք որ Ազգային վարչական մարմիններուն պաշտօնավարութեան շրջանը կարճատե ըլլայ: Եգիպտոսի համար մասնաւորապէս իր

Գ. Է. ՄԵԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԻԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՑՅՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՅՕՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑՅՈՒՆ 1848 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՉԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծագէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, գաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրութիւնները չափաւորաբար մի ապահովագրութիւն. — Առատաձեւն պայմաններ
Տեղեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակաւոր: Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԼՈՒԹ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Զ ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔԱՆԴՐԻԱ-ԳԱԼԻԷ ԲՈՒՍԱՑԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն, արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Յրանալի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւորութեամբ մուրհակներ կուտայ:

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈՂԵՆԱԻԱՑԻՆ ՆԻ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՉՄԻՐԻ, Կ, ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՈՅ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

ԱՆԲԸՐԷՐԻ ՆԻՔՈԼԱ. արդթ. թօն. 3500	2ԻՍԼՈՅ արարողութիւն թօն 3500
ՐԷՆ ՕԼԿԱ. " " 3500	2ԱՐ " " 3500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օաէս, հանդիպելով ԲՈՒՍԱՑԻՏ, ԻՉՄԻՐ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ արդէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւորուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ՆՈՎՈՒ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ԵԶԵՐԲՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՍ և ԱՉՈՅԻ ՆՈՎ:

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒՍԱՑԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՍՍ, ԻՉՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Թիքասան փողոց:

Ա. Զ. Դ.

Թերթիս բաժանորդագրութիւնը Մանսափոսթով կամ փոխանակագրով պէտք է զրկուի հետեւեալ հասցէին:

Direction du journal PHAROS

LE CAIRE, Egypte

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ՆԻ ԳՈՀԱՐԵԼԷՆՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց,

Օ. եւ Ս. Սիմաիի վաճառասան դէմը

Ապրանայ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աճանութիւն

Ճոխ հաւարածոյ Ամերիկեան և Յրանալի

Շնոկրահներու

Ծանօթ: Վարդեա ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱԲ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով

25 Գունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000

Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բարմեր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ: Մանսալուր. Աղեքսանդրիա, Մանսուրա, խարթում:

Եղիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՐՈՒՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգ. դեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աւելցւոյն գեղերու նման չի խանգարէր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ:

1—316

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

ՍԷՏԷՑՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՈԼԻՍ 1882 թ

ՓՈՒԱՐԻՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԲԱՊԱ - ԷԼ - ԽԱՏՐԱ — ՊԱԶԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռնիւնք և ակրաւ-ճիւղմաններ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դիւրամաշիկ պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՇԱԿ

ԳԻՆԵՐՈՒ ԶԱՓԱՆՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՄՈՆՍ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՅԱԳՈՐԾԷ-ՀԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիւրիւններ, եւ քէյքեր:

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջագային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէյվան:

Թէվֆիկէյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէվֆօն թիւ 504.

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ Ս ՇՅԷՑ

ԱՐՏԱԹ
ՄԵՏԱԼ
ԲԱՐԻՉ
1900

ՄԱՆՑ
ԿԻՆԵՐՈՒ
ԵՒ
ՏՂԱՑՈՑ ՀԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ
ԶԱՓԱՆՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ
ԱՂԷՔԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ